ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1879

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ

№ 92 ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 92

ԳԱԳՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՆ 10
ՄԻԶԱԿ ՏԱՌԵՐԻ Վ.ՁԱՐՆ Է 1
ԿՈՊԻԿ.

ԳՈՒԳՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄԵՆ ՀԱՑԵՐԷՆ ԵՒ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ.

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՇԱԲԱԹԸ
ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ
ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 8 Ռ.

ՕՏԱՐԱԶԳԱՂԱԹ. ԴԻՄՈՒՄ ԵՆ ՈՒՂՂԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ
ԲՑ РЕД. ГАЗЕТЫ „ПЧЕЛА АРМЕНИ“
Г. Тифлисъ.

„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

Բանասիրական, ազգային և քաղաքական լրագիրը առաջիկայ 1880 թուականին կ'հրատարակվի *) նոյն ուղղութեամբ և ձեւով։

Տարեկան գինն է 8 ռուբլի։

Առորագրվել ցանկացողք Թիֆլիզում կարող են դիմել 1), խմբագրատուն, հեռագրական կայարանի մօտ պ. Ս. Վարդանեանի տանը. 2), պ. Համբարձում Էնֆիաճեանցի ծխախոտի խանութը, Արծրունու գալերէում, 3), պ. Զ. Գրիգորեանցի գրախանութը, Միխայլովսկի կամրջի մօտ, Լոնդոնի հիւրանոցի տակ, և 4), պ. Վ. Շահվերդեանցի լրագրական գործակալութիւնը պրոսպէկտի վերայ Շիայեանի տանը։ Իսկ օտարաքաղաքացիք կարող են դիմել խմբագրատուն հետևեալ հասցէով.- Въ редакцію газеты „Пчела Арменіи“. Тифлисъ.

*) Յանօթ. յանուամ ենք, որ մի խումբ բարեմիտ անձանց Թիֆլիզում, հասկանալով կարևորութիւնը ժամանակի պահանջների և ազգի պէտքերին համեմատ ամենօրեայ հայերէն մի թերթի, ջանք են անում բաժնետրագրական ընկերութիւն կազմել և „ՄԵՂՈՒՆ“ ամենօրեայ անել։ երբ ընկերութիւնը կը կազմվի խմբագրութիւնս ամենայն կարևոր ղէպողութիւն պատրաստ է անելու այդ բարի և անհրաժեշտ նպատակի իրագործման համար։

Խմբ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Հայուհեաց ընկերութիւնը» և տեղիս հայ երիտասարդութիւնը իբր դրդիչ մեր հայուհիների դէպի ազգային գործը։

Ազգային. — Մի համեստ խորհուրդ «Մշակին».—Թղթակցութիւն Աղէքսանդրապոլից.— Մասիսի թղթակցութիւնը Խուվսից։

Մանր լուրեր։

Յայտարարութիւններ։

Ֆելիէտօն.— Սքինքսութիւն։

ԹԻՖԼԻԶ 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ

«Մեղուն» հալորդից մի կարդից դուրս ուրախութիւն լուր, այն էր Բոսփորի ափերում բնակող հայուհեաց հրաւէրը Ռուսաստանի հայ իգական սեռին մասնակցելու Հայաստանի օրիորդների կրթութեան գործին, ինչպէս իրանք յանձն առել են հոգալու այդ մասին կազմելով Կ. Պօլսում «Հայուհեաց ընկերութիւնը»։

Տարակոյս չկայ, որ ռուսահայեակ հայուհիք կարդալով այդ հրաւէրը մեծ համակրութիւն ցոյց կ'տան այդ ազգօգուտ գործին, եթէ միայն նոցա մեծամասնութեան կ'հասնի այդ հրաւէրը։

Գուցէ այս իմ խօսքերս զարմացնի մեր Կ. Պօլսում բնակող քոյրերուն, մտածելով, թէ նոցա հրաւէրը հրատարակված լինելով լրագիրներում և օրագիրներում, ինչպէս կարող է չհասնել ռուսահայեակ հայուհեաց մեծամասնութեան։ Միայն այդ մեր մէջ շատ բնական է, քանի որ լրագիրների թիւը սակաւ է և նոցա ընթերցող կանանց և օրիորդների թիւն էլ շատ աննշան է։ Մեր մէջ մեր կանանց և օրիորդաց մեծամասնութիւնը առհասարակ կարդալ չգիտէ, իսկ իմացողներն էլ այնքան հայերէն չգիտեն, որ կարդացածները հասկանան։ Իվերջոյ աւելացնելու է սորա վերայ և այն հանգամանքն, որ դասատուհեաց մեծագոյն մասը ռուսուհիներից շատերն էլ չեն հետաքրքրվում հայ պարբերական թերթերով և առհասարակ ազգային գործերով։

Այժմ կարծեմ հասկանալի կը լինի իմ կասկածս, թէ Կ. Պօլսոյ հայուհեաց հրաւէրն ինչու չգիտի հասնի ռուսահայեակ հայուհեաց մեծամասնութեան, որոյ բարեսրտութեան և ողորմածութեան վերայ չեմ կասկածում, միայն որ նա հասկանար, թէ իր վերայ պարտք կայ։ Ուստի և հայ երիտասարդութեան կ'մնայ առանձնապէս բերանացի տարածել և հասկացնել նրանց այն հրաւէրի միաքն և անտարակոյս նա կ'հասնի իւր նպատակին, զէթ մասամբ իւրք։

Այս հանգամանքներն աչքի առաջ ունենալով թո'ղ չզարմանան և նեղանան Կ. Պօլսոյ մեր յարգելի հայուհիք, եթէ նոցա գեղեցիկ հրաւէրը չունենայ արժանաւոր արձագանք Ռուսաստանի հայ իգական սեռի մէջ, այլ բարեսրտութեամբ ընդունեն և' սրանց, Յառհայաստանի իգական սեռի հետ, իրանց հովանաւորութեան ներքոյ, որովհետև հայութեան կողմից սորա էլ պակաս խաւարի և տգիտութեան մէջ չեն գտանվում։

Ջնայելով իմ ասածներիս գուցէ Ռուսաստանի հայ կանայք և' ուշ զարկեն մի քանի հազար մանէթ Կ. Պօլսի «Հայուհեաց ընկերութեան» յօգուտ Յառհայաստանի իգական սեռի կրթութեան, բայց այդ չէ կարող ջրել մեր ասածի ճշմարտութիւնն, որովհետև այդ մի քանի հազարները աննշան մասն են այն միջոցների, որ կարող էին Ռուսաստանի հայուհիք տալ, եթէ մեծամասնութիւնը նոցա իրաւէ հասկանալիս լինէր վերոյիշեալ հրաւէրի նշանակութիւնն և գործի վեհութիւնը։ Ռուսաստանի հայուհեաց արած աւելորդ և անպատուական ծախքը շատ մեծ է և նոքա կարող էին

ՖԵԼԻԷՏՕՆ

ՍՓԻՆՔՍՈՒԹԻՒՆ

Փոքր ժամանակ վարժապետս ինձ սովորցրեց, որ հին եգիպտացիների մէջ, փարաւոնների երկրում, ուր Մովսէս հրաշքներ գործեց, հրաշալի արձաններ կան, որոնց գլխները կնոջ են, իսկ մարմինը ոչխարի կամ առիւծի։ Նա ասում էր, որ այսպիսի կենդանիք աշխարհումս չկան, այլ եգիպտացիների երևակայութեան մէջ միայն ունին նոքա գոյութիւն։ Բայց ես կասեմ, որ հին եգիպտացիք չատ խելօք եղած և լմացած են, որ երբ և իցէ աշխարհումս այնպիսի կենդանիք կերևին, որոնց մի մասը մի կենդանու լինի և միւս մասը մի այլ կենդանու, կամ երկու հակառակ բնաւորութիւններից բաղկացած։ Եւ իրաւ որ այդպէս է. այսօր մեր մէջ որքան կը կամենաս սֆինքսներ կարող ես տեսնել։

— Ահա քեզ մեր մի տիկինը ման է գալիս—նայիր նորա գլխին և մարմնոյն. գլուխը կապած վրաստանցի է կամ հայաստանցի, իսկ մարմինը ճիշդ եւրոպացի, այն էլ փարիզեցի—մէջքը ամուր սեղմած, թևերը կէս բաց, ոտները տունկքով կապկապած։ Ոտից մինչև գլուխը անտեղ կասես ֆրանսիացի է, իսկ եթէ գլուխը դնենս—դուստ վրացի—ասիացի է։ Մեր կինը կէս եւրոպա է ներկայացնում և կէս Ասիա—դժբաղդաբար ոտները եւրոպա և գլուխն Ասիա—սա սֆինքսութիւն չէ։

*

Նոյնն է և մեր տղաքարդը։

Տեսնում ես վրան գլուխը մաքուր ու ճոխ, վերջին մօդայով հագնուած, երկար վերարկուանման պալտօ, քիչին պէնսնէ թամքած, գլխին ցիլինդր զրած, ձեռնոցները ֆրանսիական—թաթերը կոչտ ու կոպիտ գիւղական, դաւազանը ճկուն ու ծալծլվող, ինչպէս իւր խելքն ու դպացմունքը, գրպանը դատարկ ինչպէս գլուխը—հարցրու ոմէ է, որ մեծամարդու որդին է, որ լչխանի հետ է—կիմանաս, որ միկիտան Գիգօլու տղան է կամ մի տալարանի գրաշարը և կամ մանրում ծախողի պրիկաչչիկը։ Ուր է կրթված և ուսում առած.—Բաղասխանի կամ Միջին փողոցի համալսարանում և կամ Հաւլաբարի ծխախանում։

Արտաքուստ լուսաւորեալ եւրոպացի է, իսկ խելքին ու հասկացողութեան, կրթութեան ու ուսման նայելով ճիշդ ասիացի—այսպիսի դրութիւնը սֆինքսութիւն չէ։

**

Պրիկաչչիկ ասացի— պրիկաչչիկների նոր բացուած կլուբը յիշեցի—և արհեստաւորաց կլուբի հիմնվելուն նպատակը մտաբերեցի, որ եւրոպական էր—պէտք է այն ուսաւորութեան և կրթութեան տեղ լինէր արհեստաւորաց-դասախօսութիւնք, ընթերցմունք, ազնիւ պարապմունք—ծանօթութիւնք արհեստների հետ, դիւտութեան ճաչակը պէտք է տարածվէր հասարակ ժողովրդեան մէջ—հետևանքն եղաւ տարին 50 կամ 60 դիմակահանդէս, մի այդքան էլ ընտանեկան այսինքն պարահանդիսական երեկոներ—ոտներարմարդութիւն, մարմնավարժութիւն երբեմն և բռնամարդութիւն. ժողովարան կամ խմբարան չէ անունը, այլ կլուբ—բառը եւրոպական, իսկ կարգ ու կանոնն ասիական, ազդեցութիւնն ու հետևանքն, վնասակար, ծախքն ու բեռը ծանր ու դժուարատար։ Այսպիսի հաստատութիւնք—անունն եւրոպական—գործն ասիական—սֆինքսներ չեն։

**

Այժմ էլ պրիկաչչիկների կլուբ է բացվել, պակասը լրացել։ Ինչ է նպատակն ու նշանակութիւնը—ծառայն իր տիրոջ կ'նամնի, որդին հօրը կ'քաշի, թէ եղածներն խոր են ու նպատակաւոր, սա էլ կ'լինի արգասաւոր։ Բայց որ մտածում եմ, թէ ինչ պէտք է լինի այդ կլուբի վիճակն, ինչպէս նա պէտք է պահպանվի, երբ ահագին ծախքեր կ'պահանջի—ակամայ աչքիս առաջ չարվում են կանայք սեղաններում Թղթախաղութեան, նոյն պարահանդէսներն ու դիմակահանդէսներն իրանց ամեն դոյներով և հետևանքներով։ Երեակայիր ընթերցող, երիտասարդ պրիկաչչիկի ապագայն, թէ ինչ պիտի լինի, երբ նա ամբողջ օրվայ տանջանքից և չարչարանքից յետ իւր տանը հանգիստ գտնելու և ընթերցանութեամբ մի քանի ժամ անցնելու փոխանակ, կերթայ կլուբ թղթախաղութեամբ կամ պարելով պարապելու մինչև կէս գիշեր և էլի աւելի։ Միւս օր նա լինչպէս կազդուրված, քնաթաթախ, ջարդած ու լախտած խանութ պիտի բանայ և ամբողջ օր աչխոյժ պիտի ունենայ յաճախորդների՝ մուշտարիների հետ խօսելու և առուտուր անելու։ Եթէ սորա վերայ աւելացնենք և նորա այն գիշեր տանել տուած մի քանի ռուբլին ու հոգեկան և մտաւոր յուզմունքն կարելի կ'լինի լաւ հասկանալ պրիկաչչիկների կլուբի նշանակութիւնն ու օգուտը։ Հապա ինչու են բացել այդ հաստատութեան դռներն։—Նորա համար, որ եւրոպայում ամեն տեղ կայ, Մոսկվա ու Պետերբուրգ կայ, ինչու Թիֆլիզում չլինի—եթէ այնտեղ կարդում են ու խօսում, կրթվում ու ուսանում, այստեղ էլ խաղում են ու պարում, զուարճանում են ու խնդում։

Այսպիսի ղէօսարաններն, ըստ ձևին եւրոպական, և ըստ էութեան ոչ այս և ոչ այն—եթէ սֆինքսներ չեն հապա ինչ են,

**

Դպրոցներ ունինք—ինչ են. մեծ մասամբ անկերպարան կամ բազմակերպարան ոչինչ են։ Ֆրանսիականը կուզես, թէ գերմանականը—կ'գտնես ձիշդ մանկավարժական պահանջներին չարմար—կարդն ու սարքը, միջոցն ու ձևը—իսկ եւրոպական, ուղղութիւնն ուներքինը—անծանօթ և անբովանդակ, ինչ են պատրաստում նոքա, արդեօք իւրեանց ծառայողներ թէ մի հասարակութեան անդամներ իւրեանց պարտաճանաչութեամբ—հանելուկ է, չկտրած ձմերուկ է, մէջը հասած թէ խակ է, ոչ ոք չգիտէ, ուսանողն իսաստուն թէ խմաստակ է, դա անգիտելի է, միայն արտաքինը տեղն է և ձևը կարդին է։ Այսպիսի դպրոցները սֆինքսներ չեն։

**

Ունենք մամուլ—ամուլ է, արդիւնքն ապարդիւն է, այսօրուան չինածը վաղը քանդում է, պարապում է հարցով, որ նորա համար հարց է և ոչ մարսած ու ըմբռնած խնդիր է։ Քաղաքական խընդիրներ վճռում է, քաղաքագէտներին քննում է, արքունիքներին և թագաւորներին խրատներ և մինչև անգամ սպառնալիքներ արձակում, անխորհուրդ խորհուրդներ տալիս—լսելու բաներ չեն, ծաղրալի են։ Գաղափարներ է յայտնում, որոնց դժուար թէ ինքն ևս հաւատալիս լինի, եթէ կատարելապէս տգէտ չէ։ Սնը սպիտակի հետ համեմատում, չարը բարիի հետ, ազատամիտը ստրկականի հետ, ժողովրդականը բռնաւորականի հետ, և միւտ անքննական կերպով վաւոյն գերազանցութիւն տալիս։ Ձգնում է հաւատացնելու, որ բնական է, որ իւր զաւակին հացի տեղ քար կամ ձկան փոխարէն օձ տուողը

«ՊԱՅՔԱՐ»
ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԱՂՋԿԱՑՈՒ ՀԱՅՐԸ

Ս. Ա.

Իմաստասէրն Հռոմկղեմի
Նաեւ ասկէ կը դիտէ դարձեալ
Թէ ինչպէս ամէն մարդ կ՚ուզէ
Ունենալ ազգ մը, հայրենիք մը,
Ուր ինքն ալ ունենայ իր տեղը
Եւ ուր ինքն ալ ունենայ իր գործը
Ազգին ծառայելու համար։
Ուրեմն ազգ մը ունենալ
Ամէն մարդու ամենամեծ երազն է,
Ամենամեծ ցանկութիւնը,
Ամենամեծ փափաքը։
Ազգ մը ունենալ
Ամէն մարդու ամենամեծ պատիւն է,
Ամենամեծ հպարտութիւնը,
Ամենամեծ ուրախութիւնը։
Ազգ մը ունենալ
Ամէն մարդու ամենամեծ պարտքն է,
Ամենամեծ պատասխանատուութիւնը,
Ամենամեծ զոհողութիւնը։
Ազգ մը ունենալ
Ամէն մարդու ամենամեծ ուժն է,
Ամենամեծ զէնքը,
Ամենամեծ ապահովութիւնը։
Ազգ մը ունենալ
Ամէն մարդու ամենամեծ ապագան է,
Ամենամեծ յոյսը,
Ամենամեծ յաւերժութիւնը։
Ազգ մը ունենալ
Ամէն մարդու ամենամեծ անմահութիւնն է,
Ամենամեծ հանգիստը,
Ամենամեծ խաղաղութիւնը։
Ազգ մը ունենալ
Ամէն մարդու ամենամեծ ուրախ

այ ձեզ՝ սուտ ու սխալ լուրեր չը տալ, խնդրում եմ խնարհաբար՝ փոքր ինչ երկար յօդուած գրել այդ մասի խնդրի վերաբերութեամբ, կամ գոնէ մատնանիշ անել այն հատուածներին ազգային մատենագիրներից՝ որոնք ուղղակի այդ հարցին են վերաբերում. հաւատացէք, այդ հարցը վճռելու համար դուք գուցէ աւելի շնորհակալութեան թղթեր ստանաք, քան ձեր վճռած «Ախ-եչ-եխ» հարցի» համար: Ընդունեցէք և այլն:

Մնամ միշտ նախանձախնդիր ձեր գործունէութեան բարեյաջողութեան

Մ ա ծ ո ւ:

Յ. Գ. Խնդրում եմ մեծ. խմբագրից՝ օտարազգի հեղինակների կարծիքներին մատնանիշ չ'անել, այլ ազգային մատենագիրների բուն հարցին վերաբերող խօսքերը նշանակել. այդ խնդրում եմ ինձ հետ և մի խումբ ուրիշ երիտասարդներ:

Նոյն:

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԳԱՊԻ)

Շիրակի գաւառում Աղէքսանդրապոլ քաղաքից հօր վերստաչափ հեռաւորութեամբ դէպի արևելք-հարաւ գրեթէ Արագած լեռան ստորոտը, մի զեղեցիկ հովիտ մէջ ընկնում է թափառօլակ անունով հայկաթոլիկաց գիւղը, որի բնակիչք մօտաւորապէս աւելի են քան հարիւր տուն:

Թէև ցրման բարեխառն է և երկրը բարեբեր՝ բայց այնքան սակաւ տարածութեամբ դեռին ունին, որ տեղացոց չ'բաւականանալու առթիւ նրանց կէս մասը քանիցս իշխանութեան աղերսագիր ներկայացրել է նոր նուաճած երկիրներից մի ուրիշ տեղ բնակութիւն խնդրելով:

Դրանք գաղթականներ են 1828-1829 թուերի գաբեղենից, վահեւանցից և բագրեւանդայ գաւառներից:

Համեմատելով մեր գաւառի գիւղօրէից հետ՝ այստեղի ջուրը բաւականին առատ է, սառն և առողջաբար:

Ամերմանում են միայն ցորեն և գարի:

Բնակարաններն առհասարակ համանման են այս կողմերի գիւղական տներին, որոնք իրենց խոնաւ, ցածր, նեղ և կոպիտ շինութիւններով աւելի կարելի է գեռանոցներ անուանել:

Բնակիչք խօսում են Ախալքալաքի և Բասենոյ խառն բարբառով, որոնց կրօնասիրութիւնը գրեթէ կրօնամոլութեան հասած է...

Նրանց նաշխուն առնապանները և բազմազոյն թելերով գործուած արախնիները ցոյց են տալիս հարազատ պապական լինելները... Ձեր հարցին թէ նրանք ի՞նչ ազգութեան կ'պատկանեն, հպարտութեամբ կը պատասխանեն «ուղղափառ ենք», այդ բառին մի առանձին նշանակութիւն տալով. իսկ «կաթոլիկ» բառին «հայ» խօսքն աւելացնել անտանելի է նրանց համար...

Ապրուստների մասին խօսել աւելորդ եմ համարում, որովհետև մեր կաթոլիկ եղբարց ապրուստներն էլ տակաւին լուսաւորչական շինականց պէս նահապետական հին ձևանակով է. տարուան երեք եղանակներում են չարաչար աշխատում ձմեռուայ համար իրենց հանգիստ ապրուստ հայթհայթելու: Ունեւոր չեն և ոչ էլ հիւրասէր կամ աշխատասէր. կեղծաւոր և շողոքորթ լեզու ունին, որ առհասարակ այս կողմի կաթոլիկներին բնական է...

Բացի երկրագործութիւնը ուրիշ արհեստ չունեն, չ'զիտեն նաև կարդալ ու գրել. սրանից մի քանի տարի առաջ տեղական քահանայ Տէր-Մաղաքի դրդմամբ, որ մի բաւական հասկացող և ժողովրդական անձն է, ուսումնարան շինելու համար քար բերել տուած էին, բայց մտածելով եկեղեցին ևս մի ուրիշ տեղ տեղափոխել և նրա գաւթում հաստատել այն, առժամանակ յետաձգեցին ուսումնարանի շինութիւնը, բայց դժբաղդաբար հանգամանքները արգելեցին այդպիսի դիտաւորութեան իրագործումը. լաւ կ'լինէր, եթէ աերհայրը աշխատէր մի օր առաջ ապատել անմեղ մանկանց դատարկաշրջիկ վիճակից... պատճառ լինելով ուսումնարանի հիմնարկութեան և բացմանը:

Գիւղի հեւսիսակողմում գտանվում է եկեղեցին, հին և խարխուլ դրութեամբ, որ սովորաբար ձեղունից երկու ձողերի միջով քաշ տրուած զանգակներովը Աստուծոյ տաճար լինելը կ'ճանաչուի: Այդտեղ երեք քահանայք են ազօթում, որոց մասին խօսել աւելորդ եմ համարում, որովհետև (բացի Տէր-Մաղաքը) դրանք իրենց հասկացողութեամբ եարժանաւոր յատկութիւններով մեր գիւղական քահանաներից խպատ չեն զատվում, նրանց չափ էլ ծանօթ են իրենց սահմանած իրաւունքներին և պարտքերին:

Այժ ուղղափառների եկեղեցին, ըստ հոգևոր կան սովորութեան, ներքուստ Աստուածորդու բազմաթիւ մեծ և փոքր արձաններով և պատկերներով զարդարուած է:

Կ. Ճ.

ԽՈՒՓՍ ԳԻՒՂ ՔՂՈՒԱՑ ԵՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ.

Խուփս 28 Սեպտ. 1879

. . . Խմբագրապետ Տէր.

Բերկրութեամբ սրտի այս անգամ ընթերցողագդ ուրախ լուր մը կրբեռնեմ, խնդրելով որ Ձեր պատուական Մասեաց ստորոտը հիւրընկալել բարեհաճիք:

Քանի որ գիւղիս խուփս գիւղին վրայ պիտի գրեմ, հարկ է նախ նորա բնական դրիւն ու ներկայ վիճակին վրայ քանի մը ծանօթութիւն տալ:

Այս գիւղը 185 տնով գուտ հայաբնակ գիւղ մի է, կեդրոնատեղիէն 2 1/2 ժամ բացակայ դէպ յարևմուտս: Գիւղին դիրքը լեռնային և ապառաժուտ լինելով, մշակելի հողը խիստ նուազ է բնակչաց թուոյն համեմատութեամբ, որով և իրենց ապրուստը ձարելու համար մեծ դժուարութեանց ենթակայ և բազմաթեամբ լ պանդխտութիւն գիմելու ստիպեալ են հանապազ: Արհեստ գրեթէ չկայ, առևտուր հինգ վեց տուն միայն ունին, այն ալ շատ ո՞չինչ բան մ'է: Այս վերջին ձախող պատերազմին ազնուներէն ժողովուրդը շատ մեծ ջնաս կրած և յետին աստիճան աղքատութեան ենթարկուած է: Այս գիւղը Տաւրոսի մօտ լինելով, ժողովուրդը զօրաց տեղափոխութեան ու հանապազօրեայ անցուդարձից երեսէն ա'նպիսի տառապանաց ենթակայ է, որ դպրոցի խնդիրը մոքէն անգամ չէր կրնար անցնել, եթէ բարեբաղդաբար Արարատեան ընկերութիւնը ղայն չ'հոգար:

Գանք այժմ բուն մեր նպատակին:

Արդէն նախընթաց նամակաս Արարատեան ընկերութեան Տաւրոսի վարժարանաց հաստատութեան ներկայացուցիչ Մեծ. Պետրոս էֆէնտիի այսր հանդիպ և գաւառիս տեղեկագրին ընկերութեան պատուարժան Գործ. ժողովոյ ուղղելը ծանուցած էի. ամսոյս 25-ին հասաւ այսր Արարատեան ընկերութեան Գործ. ժողովոյ մի պաշտօնական գիրը, որով կ'իմացնէր ներկայացուցիչ էֆէնտիին ընկերութեան վարժարանը ի խուփս հաստատել: Արարատեան ազգօգուտ ընկերութեան այս հրամանը խուփս գիւղը աղքատիկ հասարակութիւնը եռախտագիտական զգացմամբ համակեց: Լքեալ և ընդարմացեալ սրտերու նոր աշխոյժ և նոր եռանդ ներշնչեց: Նոյն օրը երեկոյին բոլոր գիւղացիք իժողով գումարեցան. անմիջապէս կազմուեցաւ վարժարանի շինութեան հսկող վեց անդամէ բաղկացեալ յանձնաժողով մը. հետևեալ առաւօտեան գիւղին քարոզիչ Արժ. Ներսէս վարդապետ Բզնունիի ներկայութեամբը, դպրոցականաց դասումը ու բոլոր գիւղացւոց խումն բազմութեամբ վարժարանին հիմնարկութեան օրհնութիւնը կատարուեցաւ: Արժ. Ներսէս վարդապետը հանուած բայց աղքու ատենաբանութեամբ մը խրախուսեց ու քաջալերեց ժողովուրդը միաբանութեամբ ջանք և զոպողութիւն չխնայելու վարժարանին շինութեան համար, և օրհնեց Արարատեան ընկերութիւնն ու հանդիսականքը. այս կերպիւ ասարտեցաւ հանդէսը օրհնութեան մրմունջներով, և ժողովուրդը անհուն եռանդով ու ջանքով սկսաւ շինութեան գործոյն:

Մեծ. ներկայացուցիչ էֆէնտիին ու խուփս գիւղի ընկերներէն մեծապատիւ գէորգ էֆէնտի Խոշմաթեանին ուսումնասիրական ազգու խրախուսով քաջալերեալ ժողովուրդն անմիջապէս ամեն զոհողութիւն և ջանք յանձն առաւ: Վարժարանը եկեղեցւոյ արևմտեան կողմը 22 կանգուն երկայնութեամբ և 28 կանգուն լայնութեամբ խիստ յարմար և ողջապահիկ կանոնաց համաձայն գետնի մը վրայ հիմնարկուեցաւ ամսոյս 26-ին: Շէնքը կրկնայարկ պիտի լինի, ստորինը 4 և վերինը 5 կանգուն բարձրութեամբ: Վերնայարկին հարաւային կողմը շէնքին ամբողջ երկայնութեամբն և 7 կանգուն լայնութեամբ 9 լուսամուտներով պիտի լինին բուն վարժարանը, իսկ վերնայարկին հիւսիսային կողմը նախատաւթի մասից երկու կողմերը 8ական կանգուն երկայնութեամբ և 6ական կանգուն լայնութեամբ երկու դասարաններ: Թէ՛ բուն վարժարանին և թէ դասարանաց գոնները նախագաւթին մէջ պիտի բացուին: Այս շէնքին ծախքը գիւղացւոց նիւթական կարողութեան հետ բազմագատմամբ թէև կարի ծանր և ժամանակին իսկ տարաժամ, սակայն խօշմաթեան Մեծ. Գէորգ էֆէնտիի քաջալերութիւնը, յորդորը, ջանքն ու ձեռնտուութիւնը զայն կարի յոյժ կը թեթևացնեն և կը դիւրացնեն, և ընդհուպ յամբոկ կ'ածեն գործս նախ քան ըզձրմեռն:

Մեծ. ներկայացուցիչ էֆէնտին և խօշմաթեան եղբարք հասարակ բանուորի պէս մինչև երեկոյ անդուլ կ'աշխատին քար և փայտ կրելով. այս նախանձելի օրինակը հասարակութեան մեծ քաջալերութիւն և խրախոյս կը ներշնչէ, գործը արագութեամբ և փութով առաջ կ'երթայ, և ամեն անհատ գինքը երջանիկ կը համարի այս գործոյն մասնակցելու աշխատութեամբ և ձեռնտուութեամբ: Ջկայ տուն մը և անհատ մը մեծ և փոքր առհասարակ, որ այս ջանից չմասնակցին: Միութիւն և համախոհութիւն կը տիրէ ամենուն վրայ, և ժողովրդին գործն այսպէս բաժնուած է. առաւօտեան ժամը 12էն մինչև երեկոյեան ժամը 11ը շինութեան վրայ կ'աշխատին, ժամը 11էն մինչև գիշերուան ժամը կէսը՝ գիւղին շրջականերէն շինութեան փայտերը կը կրեն, և գիշերուան ժամը 1էն մինչև 3ը առհասարակ իժողով գումարուելով հետևեալ աւուր ընելիքնին կը խորհին և կ'որոշեն: Ժողովուրդը մոռցած է իւր ապրուստն ու աղքատութիւնը աղէկ համոզուելով որ իւր ապագայ երջանկութեան ու բարօրութեան հեմը վարժարանին հիմման վրայ պիտի կանգնուի. վարժարանին շինութեան համար յետին չքաւոր այրին ալ իւր լումայն մեծ սիրով կ'նուիրէ, Արարատեան ընկերութեան վեհ անունը օրհնութեամբ կ'արտասանուի և ամեն սրտերու մէջ արձագանք կը գտնէ:

Մեծ. ներկայացուցիչ էֆէնտին շէնքը շուտով աւարտելու և աղքատիկ ժողովրդեան նիւթականեղ վիճակին խնայելու նպատակաւ մը կառուցանել, սակայն ժողովուրդը անհուն եռանդով ու զեղեցիկ յանդգնութեամբ մը իւր կարողութենէն վեր ձեռնարկութիւն մը կընէ և կը փափաքի Արարատեան ընկերութեան փառաւոր անուան յարմար շէնք մը շինել, և զայն իւր զաւակներովն ու երախտագիտական խորին շնորհակալեաքն հանդերձ յանձնել ԻՐԵՆ: Առայժմ այսչափ, այս մասին շարունակել խոստանալով:

Մնամ . . .

Վահան Մէսրոպեան:

(Մ ա ս ի ս):

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Վիէննայի «Politische Correspondenz» լրագրին գրում են նոյեմբերի 9ին Պետերբուրգից.

«Ինչպէս երեւում է լորդ Բիկոնսֆիլդը արտաքին սերտագործութեանց կարօտութիւն է զգում Անգղիայի աչքից ծածկելու համար նորա վիճակի նոյն իսկ երկրի մէջ գտնուած դժուարութիւնները: Կասկած չկայ—և այս յայտնի է անչուշտ և վիէննայում—որ Լոնդոնի արքունիքի Տաճկաստանի վերաբերութեամբ ձեռնարկած վճիռների մասին հետագիրը նոցա նշանակութիւնը չափազանցութեան է հասցրել և որ անգղիական դեսպան սըր Հէնրի Լէյեարդը Մահմուդ-Նեդիմ փաշայի նշանակվելուն չափազանց մեծ կարևորութիւն է ընծայել: Եթէ այստեղ ստացուած տեղեկութիւններին հաւատանք, կտեսնենք, որ այն ազմուկն որ վերջին օրերս տեղի ունեցան այս դէպքի առթիւ, այն արդիւնքն ունեցաւ, որ լեառը ծնեց մուկն և փոթորիկը մի բաժակ ջրի մէջ էր: կան չատ պատճառներ, որոնք մատնացոյց են անում որ Մահմուդ-Նեդիմ փաշան Անգղիայի վերաբերութեամբ ոչ մի անհամակիրութիւն չէ ցոյց տալիս: Նախ և առաջ Դրան հարկաւոր է զբրամ և այդ տալ կարող է միմիայն Անգղիան. բացի սրանից Մահմուդ-Նեդիմ փաշայի ռուսասիրութիւնը, որ ըստ երևութին հաստատ հիմք չունի, համարեա նորա վերայ պարտականութիւն է դնում թուլացնելու այդ իւր վերայ եղած կասկածը գործողութիւններով. Այսպէս ուրեմն կարելի է որ սըր Հէնրի Լէյեարդը չտապեց բարկանալու և մինչև անգամ կարելի է նախագուշակել որ նա այս վարմունքի համար պարծենալու պատճառ չի ունենալ: Բայց դորա փոխանակ խաղաղութեան և մարդասիրութեան չահերը անգղիական կառավարութեան գործողութեանց այս տարօրինակ կերպից հեշտ կարող են օգուտ քաղել: Մեզ, հեռագրով հաղորդած «Հիւսիսային-Գերմանական Ընդհանուր Լրագրի» յօդուածում չատ գեղեցիկ կերպով ասուած էր, որ Անգղիայի գործունէութիւնը կարող է ազատ հանդէս գալ փոքր—Ասիայում յօգուտ քրիստոնեաների խոստացած բարենորոգմանց իրագործելուն ճնշմամբ հասնելու համար, բայց եթէ այս պետութիւնը այս նպատակակետից անցնի, կարող են նրան դիմադրել՝ Աւստրիա—Մաճառստանի և Գերմանիայի միացեալ չահերը: Այսպէս ուրեմն Անգղիային յայտնի է, թէ մինչ որ ասիճանին կարող են հասնել նորա պահանջները Արևելքում: Խաղաղութեան հաստատութեան համար այս մեծ և ամենաբաւարար իրողութիւնն, է որը կարելի է չերեկր այնպէս հանդիսաւոր կերպով, եթէ սըր Հէնրի Լէյեարդի գործողութեանց կերպը և Բերլինի պաշտօնական լրագրի բացատրութիւնները չլինէին: Մարդասիրական տեսակետից նայելով Անգղիայի գործողութեանց այս կերպը առանց արդիւնաւոր հետևանքների չմնաց: Ինչն ըստ ինքեան հասկանալի է, որ Բ. Դուռը Մահմուդ-Նեդիմ փաշայի միջնորդութեամբ կամ առանց նորա ստիպուած կլինի քրիստոնեաներին փոքր—Ասիայում, մանաւանդ Սիրիայում, խոստացած բարենորոգմունքներն իրագործել: Եթէ Դուռը այս ժամանակամիջոցում կզրկուի իւր հեղինակութեան մի մասից էլ, այն ժամանակ քրիստոնեաները կձեռք բերեն այն կողմերում չատ իրաւունքներ, և այս դէպքից քաղաքակրթութիւնը ստացած կլինի իւր վաստակը: Սա կլինի մի նոր հետևանք այն պատերազմի, որ ազատութեան համար մղեց Ռուսաստանը,

որին նորա հակառակորդները դեռ ևս փառասիրութեան և աչխարհակալութեան ձգտումների մէջ զրպարտում են։

***

Վրիպակ. «Մեղուին» անցեալ համարում Գայիանեան ուսումնարանի Տ ա ն ա մ ա կ ի նկարագրութեան մէջ սխալմամբ հանգուցեալ բարերարաց թուի մէջ չէր յիշած հանգուցեալ Յովակիմ Տէր Ղազարեանն, որի անունը յիշատակուեցաւ հոգեհանգստեան ժամանակ։

***

Լսում ենք, Ֆոր Թիֆլիզումի բացի չար մարդիկներից երևացել են և չար դևեր, որոնք բուն են գցել երկաթուղու կայարանի մօտ եղող մի աւերակ տան մէջ։ Այդ չար դևերին բռնելու գնացել են մի քանի կլասիկական մանկավարժ-սպերիտներ ուղեկցութեամբ բազմաթիւ իրանց աչակերտների, միայն իրանք չար դևերի փոխանակ բռնվել են ոստիկանական զինուորներից։ Էլ ինչ կարելի է ասել ռամիկ ժողովրդեան նորա ա-ւելորդապաչտութեան և մնոտիապաշտութեան համար, երբ իրանք ուսման և գիտութեան ներկայացուցիչներն մնոտիապաչտ են։

***

Եւրոպական լրագիրները հաղորդում են, որ Բեկէր փաչային տրված է սուլթանից հրովարտակ, որ Ասիական—Տաճկաստանի բոլոր իշխանութեանց հրամայում է նպաստել նորա գործունէութեանց, որ պէտք է կայանան երկրի մէջ ժանդարմների խմբեր կազմելում և կարևոր բարենորոգմունքներն որոշելու և իրագործելու միջոցները գտնելում։

***

Անցեալ հինգշաբթի, ամսոյս 22ին հայ դերասանական խումբը ներկայացրեց մեծ. պ. Գ. Սունդուկեանցի «Թաթթաբաան»։ Պիեսայի մասին խօսելու հարկ չկայ, քանի որ նա հրատարակած է և քանիցս քննութեան ենթարկված։ Խաղն ընդհանրապէս չատ կենդանի էր, այնպէս որ չատ ծիծաղ և ծափահարութիւնք յարուցեց։ Հեղինակը ստացաւ ընծայ թանաքաման և ոսկեայ գրիչ։ Դժբաղդաբար այցելուների թիւը համեմատաբար փոքր էր։

***

Վաղը ամսոյս 29ին մեծ. օր Սիրանուչի բենեֆիսն է. կներկայացնեն առաջին անգամ «Հարստահարուած առաքինութիւն» դրամա 5 արարուածով։ Տարակոյս չկայ, որ Թիֆլիզի հայ հասարակութիւնը, հետևու ամենայն կուսակցական ոգուց, արժանապէս կ'պատուէ իւր հիւր դերասանուհուն, թէ իւր այցելութեամբ և թէ ընդունելութեամբ։

***

ԱԳՈՒԼԻՍԻՑ գրում են Տէր-Մեսրովբ քահանան, որի համար այնքան խռովութիւններ ծագեցան այստեղ, այս օրերս կրկին վերադարձել է և կատարում է իւր պաշտօնը։ Նորա հակառակորդներից մէկը ասումն երկու օր է (ասում են էլ չէ գնալու) չէ գնում եկեղեցի, որ իւր կեանքում առանց ժամ գնալու չէ կարող ապրել . . . Մի մարդու համար որ 15—20 տարի իւր եղբօրից խռով է, ժուար չէ այդպիսի գործը . . .

***

—Սուրբ Գրիգոր եկեղեցու ծովը յիշեալ քահանայի համար երկու կուսակցութեան է բաժանուած։ Սարսափելի անբաղդութիւն, հաշիւ թէ աղատուած էինք կուսակցութիւններից, հաշիւ թէ ժողովուրդը փոքր ինչ խաղաղ կեանք էր վարում և ահա, պէտք է նորից սկսվեն սկանդալները և կուսակցութիւնները . . .

***

—Լսում ենք, որ մեծ. պ. Լեոն Թիւսիկեանցը ուսուցչական խմբի հետ միասին մտադիր է ամբողջ ձմեռուայ ընթացքում միքանի ներկայացումներ տալ։ Ներկայացումները երևի կը լինին անպատճառ յօգուտ ուսումնարանի, կամ չեմ։ Առաջին ներկայացման համար, ինչպես ասում են, պատրաստում են «Դալալ Ղազո»։

***

—Լսում ենք, որ սուրբ Գրիգոր եկեղեցու դանձապետը, այս օրերս հրաժարուել է պաշտօնից, եկեղեցու բանալին պ. Թ. Ալեքսեանցին յանձնելով։ Յանկալի կը լինէր իմանալ թէ ինչու պ. դանձապետը միայն սրան է բարեհաճել յանձնել բանալին, մինչ եկեղեցին սեպհականութիւն է միայն մի անհատի այլ ոչ ժողովրդեան . . . մինչ սուրբ Գ. եկեղեցու ժողովուրդը անղգայ է, որ տանում է լռութեամբ այսպիսի անպատուութիւններին, մինչ նա այնքան տգէտ է, որ իւր իրաւունքները յանձնում է մի պարոնի կամայականութեանը . . .

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ։
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՁԵԱՆՑ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

„ՓՈՐՁ“

ԱՄՍԱԳՐԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ (XI) ՀԱՄԱՐԸ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ I. Կիլիկիա. Հրատարակական դասախօսութիւն. Ներբնից։ 2. Ստեփաննոս Նազարեանց և նորա գրականական գործունէութիւնը. Ա. Երիցեան։ 3. Մայրենի լեզուի ուսումը դասախօսութիւն Բ. Բէրժէի 1878 թ. փարիզի աչխարհանդէսի ժամանակ։ 4. Ճանապարհորդութեան տպաւորութիւններ, Սիւրիայ։ 5. Բանաստեղծութիւններ պ. Ադամեանի (1 Պատկերասան և Մեղուն, 3. Առակ ագռաւից, 3. Անհամաձայն ամուսինք, 4. Լուսանցկամ Բարմայի մանիշակ, Իմաստակն)։ ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ 6. Տաճկաստանի հայոց ընկերութիւնները։ 7. Նամակ Կիլիկեան ընկերութիւնից։ 8. Առուանեաններին կը-տակագիրը։ ՅԱՒԵԼՈՒԱԾ. 9. Ջինկոի երեխան, քաղաքական—երգիծաբանական զրոյց, գործ Էդուարդ Ջենկինսի։ 10. Յայտարարութիւններ։

Ստորագրուել կարելի է Տփխիսում «փորձի» խմբագրատանը և կեդրոնական գրավաճառանոցում։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել խմբագրին հետևեալ հասցէով։ — Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала «ПОРДЗЪ»

Խմբագիր—հրատարակիչ

Աբգար Յովհաննիսեան։

3—3

ԻԶՄԱՅԼՕՎԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՂԱՆԻՔ

Մեխայլովսկի կամրջի մօտ, պիտնուորական ժողովարանի հանդիպակը, նոմերները ամբողջ օրը՝ շոգիով և առանց շոգիի. գինն է 1 ռուբլեից մինչև 1 ռ. 50 կ. իւրաքանչիւր ժամը։

Հասարակաց բաղանիք՝ մանաւոր մարդոց համար 10 կոպ. իսկ զինուորների համար 5 կոպ.—ամեն օր բացի կիւրակէ և երկուշաբթի օրերից։ Շաբաթ օրերը Հասարակական բաղնիք կանանց համար—15ական կ.։

3—5

ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ԿՕՆՏՈՐԱՆ,

Աբծրունու գալլերէում №181, 12—2 ժամը, յանձն առնում է մակարդակներ, նախահաշիւներ կազմելու և ամեն տեսակ շինուածքների աչխատութիւններ կատարելու։

Ա. Տէր-Միքաէլեանց.

4—4

Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը յայտնում է, որ նորա նիստերում նշանակած են վերջնական հետևեալ աճուրդախօսութիւնքն առանց կրկնաճուրդախօսութեան.

1) Կապալով տալու համար 24ին ներկայ նոյեմբերի 1879 ամի Հաւելարի քաղաքային տափերը՝ մի մասը 1890 դեսեատին տարածութեամբ և միւս մասը 257 դեսեատին, յունվարի 1-ից 1880 թուի մինչև 1883 թուականի յունվարի 1ը ժամանակամիջոցով։

2) Ներկայ 1879 թուականի դեկտեմբերի 7ին կապալով տալու համար քաղաքի սահմանը կուր գետով ներս բերած լաստերի հարկերը 26ից յունվարի 1880 թուականից մինչև 1883ի յունվարի 1ը։

3) Ներկայ 1879 ամի դեկտեմբերի 7ին կապալով տալու համար նաւակը վերա գետի բերանից վերև քաղաքիս լաստահանդստի մօտ, 1880 թուականի, յունվարի 26ից մինչև 1ը յունվարի 1883 թուականի։

4) 1879 թուականին դեկտեմբերի 4ին կապալով տալու համար հարկը կառապանների և բեռնակիր կենդանիների համար 1880 թուականի յունվարի 1ից մինչև 1883ի յունվարի 1ը։

5) 1879 թուականի դեկտեմբերի 1-ին կապալով տալու համար ձիաների հարկը յօդուտ քաղաքի 1-ից յունվարի 1880 թուականի մինչև 1883 թուականի յունվարի 1-ը։

6) 1879 թուականի դեկտեմբերի 5-ին կապալով տալու համար հարկերը քաղաքային չափերից և կշռքներից 26-ից յունվարի 1880 թ. մինչև 1883 ի յունվարի 1-ը։

Պայմաններն այս բոլոր կապալների համար ցանկացողները կարող են տեսնել քաղաքային վարչութեան կանցելեարեայում ամեն օր բացի կիւրակի և ասն օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 2-ը կէսօրից յետ։

3—3

Ստորագրեալքս ԱԽԱԼՑԽԱՅԻ քնակիչք այսու յայտնում ենք որ մենք յօժարակամ համաձայնութեամբ որոշել ենք ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՆ ԳԱԼԸ ՎԵՐՋԱՑՆԵԼ վճարելով տարեկան մի մի ռուբլի յօգուտ Ախալցխայում կազմուելիք բարեգործական ընկերութեան և այս տարուայ փողերը արդէն տուած ենք։ Ամէն մարդ կարող է մեզ հետ ընկերանալ կանխիկ վճարելով մի մի ռուբլի մեր դանձապետ պ. Մանուկ Թամազեանին։ Մեզանից այն անդամները որոնք մի ռուբլին տալից յետոյ դարձեալ կը շարունակեն տօնախմբութիւն կատարելը անդամակցութիւնից կ'մերժուին իբրև իւրեանց ազնիւ խօսքը և յօժար ցանկութիւնը արհամարող և ոտնակոխ անող մարդիկ։ Այդ հիման վրայ հարկ ենք համարում հրապարակաւ յայտնել այսու մեր բոլոր ազգականներին և բարեկամներին թէ արանց և թէ կանանց որ մենք այսուհետև իւրեանց տները տօն չնորհաւորելու համար գնալու չենք և խնդրում ենք որ իւրեանք ևս իւրեանց հերթում նեղութիւն չը կրեն գալ մեր տօնը չնորհաւորելու։

Սարգիս Յարոյեանց, Մկրտիչ Պետրոսեանց, Մանուկ Ղազէկեանց, Կարապետ Գարոյեանց, Մարտիրոս Յարոյեանց, Մարտիրոս Վարդանեան Աւլանեանց, Գրիգոր Ջարակեանց, Կարապետ Մանուկեանց, Դաւիթ Քուփալեանց, Սահակ Ներսէսեանց, Յակոբ Մէհտարեանց, Խաչատուր Չէշմաճեանց, Մատուկ Թամբաչեանց, Գաբրիէլ Մինասեան Աւվազեանց, Աղաջան Չիլ-Յակոբեանց, Կարապետ Դաւթեան Վանցեանց, Մհոտեսի Մինաս Փոլոյեանց, Խաչատուր Դօշոյեանց։ Սարգիս Պաղչինեանց, Մկրտիչ Ջարակեանց, Մհոտեսի Ղևէն Դէորգեանց, Յակոբ Ղասապաշեանց, Նիկողայոս Տէր-Գրիգորեան, Յովակիմ Գեղամեանց։

5—10

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1880 годъ

НА ЕЖЕДНЕВНУЮ, БЕЗЦЕНЗУРНУЮ, ПОЛИТИЧЕСКУЮ

И ОБЩЕСТВЕННУЮ ГАЗЕТУ

„РУССКІЙ КУРЬЕРЪ.“

Газета будетъ выходить ежедневно, въ форматѣ нашихъ большихъ газетъ, по слѣдующей программѣ: постановленія и распоряженія правительства; телеграммы; обзоръ политическихъ событій и общественной жизни; обсужденіе вопросовъ дня; военныя извѣстія; мнѣнія русской и иностранной печати по данному вопросу и сущность руководящихъ статей; иностранныя извѣстія по русскимъ и заграничнимъ источникамъ; извѣстія изъ славянскихъ земель. Жизнь Россіи: наши домашнія дѣла; корреспонденціи; народное образованіе; внутреннія извѣстія; хроника; хроника научная, литературная и художественная; театральныя и жузыкальныя извѣстія; судебная хроника. Историческій листокъ; разныя извѣстія; биржевыя, железно-дорожныя, торговыя и др. свѣдѣнія; справочныя извѣстія.

Подписная цѣна съ пересылкой и доставкой въ Москвѣ и на

города:

На годъ	. . . . .	6 руб.
„ полгода	. . . . .	4 „
„ 3 мѣсяца	. . . . .	3 „
„ 1 мѣсяцъ	. . . . .	1 „

За границу плата вдвое.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: въ конторѣ редакціи газеты „РУССКІЙ КУРЬЕРЪ,“ Столешниковъ пер. д. Рожнова; въ конторѣ изданія газеты—у Москворѣцкаго моста, въ д. **Н. П. Ланина**, въ его конторѣ, и у всѣхъ извѣстныхъ книгопродавцевъ Москвы; въ С.-Петербургѣ—въ книжномъ магазинѣ Исакова и карвографическомъ заведеніи Ильина.

Гг. иногородные благоволятъ адресовать свои требованія исключительно въ контору изданія газеты „РУССКІЙ КУРЬЕРЪ“—Москва. Москворѣцкій мостъ, домъ Ланина, при его конторѣ.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 27-го НОЯБРЯ 1879 г. Типографія Амб. Энфіаджянцъ и К-о

Տուն Բժշկապետ Մ. Ռոտինեանց։